

Տիար.

Հայկական լինդն. Միութեան բազմադիմի նպատակին մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ միտքի մշակութեան բաժինը։ Այս ընկերութիւնը իր հիմնարկութենէն ի վեր այդ ուղղութեամբ աշխատեցաւ, և ինչպէս արդէն իր վերջին տեղեկազրէն կ'լ. բեւայ՝ այժմ իր գլխաւոր ուշազրութիւնը դարձուցած է կրթական զործին։

Բայց այդ զործունէութեան մէջ պակաս մը կար, զոր կեղր, վարչ, ժողով, վերջերս փափաքեցաւ լրացնել, հիմնելով իր կեղրոնատեղուոյն մէջ «Էկողրանական Գրա- դարան» մը։ Այս հաստատութեան նպատակը պիտի ըլլայ Հայ ազգին ու աշխարհի։ Վրայ խօսող ձեռագիր ու տպագիր ամէն լեզուէ հեղինակութիւններ և հայ կրթութեան ծառայող ամենազգի դպրոցական դասագիրքներ հաւաքել, և ատոնց կրկին օրի նակները յատկացնել բնագաւառի կարօտ Մատենադարաններուն և Ընթերցաւուն։

Այսպիսի առաջարութեան մը օգտակարութիւնը վեր հանելու պէտք չենք զգար, և տարակոյս չունինք որ մասնաւորապէս հայութեան մոռաւորական դասակարգը մե- զի պիտի չի զանայ իր անվերապահ օժանդակութիւնը այս ձեռնարկին յաջողութեան համար։

Այդ յայսով՝ պրտագին կոչում կ'ընենք ազգային հեղինակներուն, ուսուցիչնե- րուն, խմբագիրներուն, հրատարակիչներուն, զրավաճառներուն, և առ հասարակ բո- լոր կրթասէր անձեռուն, ինդրէլով որ ջանան ճոխացնել Միութեան Գրադարանը ի- րենց նուէրներով, որով ոչ միայն սատարած պիտի ըլլան հայ միտքի արտազրոյթնե- րուն և հայ կեանքի տարեզրութեանց կազմաւոր կեղրոնացումն, այլ և զաւառային գրադարաններու անուղղակի նպաստաւորումին։

Զուգելով Միութեան սնտուկին վրայ բեռ ըլլալ՝ ժողովրդական զոհողութիւն- ներով է որ պիտի աշխատինք արդինաւորութիւն մը ապահովել կեղրոնական Գրա- դարանին։ հետեւարար՝ սիրով պիտի արձանագրինք ամէնէն համեստ նուէրներն անզամ։

Խորին յարգանքով՝

Գառիրէ, 10 Մայիս 1911

Հ. Բ. Բ. Մ. Կեղրոնական Գրադարանի

Գրադարանապետ

Կ. Շ Ե Ր Ի Տ Ճ Ա Ն Պ է Յ

Հ Ա Ա Գ Լ

Mr. C. Chéridjian Bey,

Bibliothécaire de l'Union Gén. Arménienne,

10, Rue Nubar Pacha,

LE CAIRE.